

ՀԱՊԱՂԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է.  
ՈՐԱԿՅԱԼ ԿԱԴՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՍՊԱՌՎՈՒՄ ԵՆ

Հետազոտական համալսարանների ստեղծման գաղափարը պատկանում է գերմանացի Հումբոլդին:

1809 թվականին Բեռլինում ստեղծվեց նոր տիպի համալսարան, որտեղ ավելի քիչ մարդ էր ուսանում, քան գործող համալսարաններում:

Նոր տիպի համալսարանի կարևոր սկզբունքներն էին՝

1. ակադեմիական ազատություն,
2. հետազոտական աշխատանքների գերակայություն,
3. բարձրակարգ գիտնականների պատրաստում:

Եթե դարասկզբին ավանդապաշտ Եվրոպայում դրանք մեծ տարածում չգտան, ապա ԱՄՆ-ում, ուր կրթության ու գիտության նկատմամբ կար դեմոկրատական մոտեցում՝ այս մոդելը շատ արագ ներմուծվեց և ուներ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ. Միացյալ Նահանգները համարձակ էր ամեն մի նորամուծության կիրառմամբ, և հսկայական քայլերով զարգացող արդյունաբերությունն ու տնտեսությունը արտադրության հետ կապված գործուն գիտնականների շերտ ստեղծելու պահանջարկ առաջացրին, որն ապահովելու էր կրթություն-գիտություն-գիտական արտադրանք համակարգված շղթան:

Մ. Պ. - Վերջերս հաճախ է խոսվում հետազոտական համալսարանների մասին: Աշխարհի զարգացած երկրներում այս համալսարաններն արդեն կայացած, գործող օղակ են երկրի կրթության, գիտության և արտադրության շղթայական համակարգում: Պարո՛ն Հարությունյան, ինդրում եմ պարզաբանել, թե ի՞նչ է հետազոտական համալսարանը, ինչո՞վ է այն տարբերվում մեր պատկերացրած դասական համալսարանից և ի՞նչ գործառույթներ է իրականացնում:

Մ.Հ. - Հետազոտական համալսարանները կառույցներ են, որոնք բավական հաջողությամբ կարողանում են ինտեգրել գիտությունը, կրթությունն ու արտադրությունը: Նման համալսարանների ստեղծման գաղափարն առաջացել է 19-րդ դարում: Ի՞նչն էր դրանց ստեղծման իմաստը. մինչ այդ և այժմ էլ գործում է հայտնի դասական համալսարանների մոդելը, որ դեռ շատ վաղուց ստեղծվել էր Եվրոպայում, բայց գիտության, տեխնիկայի զարգացմանը, արդյունաբերության մեջ նոր տեխնոլոգիաների ներմուծմանը զուգահեռ՝ նոր տիպի համալսարանների ստեղծման անհրաժեշտություն էր առաջանում: Պետք է ստեղծվեր մի կառույց, որտեղ հնարավոր լիներ մասնագետների (հիմնականում՝ տեխնիկական ուղղության) պատրաստման մեխանիզմներ ունենալ: Սրանք այն համալսարաններն են, որոնք անմիջականորեն կապված են արտադրությանը, կամ, ավելի ճիշտ՝ նրանց դերը այս կամ այն խնդրի լուծման ռացիոնալ ուղիներ ու լուծումներ գտնելն է: Այդ լուծումները պրակտիկ կյանքում (խոսքս արտադրության մասին է) կիրառելն է: Այս համալսարաններում ձևավորվում է նաև արտադրության հետ անմիջականորեն առնչվող գործող գիտնականների մի շերտ, որ հեշտությամբ գիտությունը ինտեգրում է հասարակությանը: Սա էր հետազոտական համալսարանների հիմնական գաղափարը:

\* \* \*

ԱՄՆ-ի և Եվրոպական մի շարք երկրների հետազոտական համալսարանների թիվը՝ 2000 թվականի տվյալներով

ԱՄՆ- 260 (ամենահայտնիները առաջին 100-ն են, այդ թվում՝ Հարվարդ, Թեխասի համալսարան, Մասաչուսեթս, Սթենֆորդ և այլն)

Գերմանիա- 70 (ամենահայտնիները՝ Բեռլինի Հումբոլդի անվան, Բրեմենի, Յենի, Լայպցիգի համասարանները և այլն)

Մեծ Բրիտանիա- 73 (Քեմբրիջ, Օքսֆորդ, Լոնդոնի Imperial College, Յորքի, Բրիսթոլի, Նոթինգհամի համալսարանները)

Իսպանիա- 41 (Մադրիդի, Սանտյագոյի, Բարսելոնայի, Կորդովայի համալսարանները)

Ռուսաստանի Դաշնություն- 2 (ՄԼՂԼ, ՄԼԽԼԽ)

Իսրայել-Թե Ավիվի հետազոտական համալսարանը

\* \* \*

Այսօր Միացյալ Նահանգներում ավելի քան 4000 համալսարան կա, որոնցից դասական հետազոտական համալսարանի կարգավիճակ ունի մոտավորապես 260-ը: Կրթության համար դաշնային բյուջեով նախատեսված գումարի 95%-ը ուղղվում է դրանց:

Թե ի՞նչ է հետազոտական համալսարանը և ինչո՞ւ է այն տարբերվում դասական համալսարանի մոդելից՝ փորձեմ բացատրել ԱՄՆ համալսարանների օրինակով:

Հետազոտական համալսարանների ամենակարևոր բաղադրիչը, դրանք բնութագրող չափորոշիչը գիտահետազոտական ինստիտուտների առկայությունն է: Հնարավոր չէ պատկերացնել հետազոտական համալսարան, որում ընդգրկված չեն մի շարք հետազոտական ինստիտուտներ: Կապված հետազոտական համալսարանի տեսակից՝ բյուջեում կրթական ծրագրերի վրա ծախսվող գումարները կազմում են 30-40%, որոշ համալսարաններում, նույնիսկ, ավելի քիչ՝ 15-20%: Մնացած գումարները տրամադրվում են հետազոտական, գիտական թեմաներին:

Կան հետազոտական համալսարանների մի շարք առանձնահատկություններ. նախ՝ դասախոս-ուսանող հարաբերակցությունը այստեղ 1/5 է, այսինքն՝ 5-6 ուսանողի հետ մեկ դասախոս է պարապում: Դասական համալսարաններում այդ հարաբերակցությունը 1/12-14 է՝ կապված համալսարանի տեսակից: Այս համալսարաններում հիմնականում մագիստրոսական և ասպիրանտական կրթություն է իրականացվում, մինչդեռ սովորականներում բակալավրական և մագիստրոսական: Դրանց բնութագրող մեկ այլ չափորոշիչն էլ այն է, որ դասախոսական կազմում հիմնականում գործող գիտնականներ են, այսինքն՝ ռեալ գիտությամբ զբաղված պրոֆեսորներ, որոնք ընտրվում են մրցույթով, ընդ որում՝ միջազգային: Հետազոտական համալսարանների պրոֆեսորները ոչ միայն սովյալ պետության, այլև այլ երկրների փորձառու, ճանաչված գիտնականներ կարող են լինել: Այդ համալսարաններում պերմանենտ հաստիքները բավական փոքր թիվ են կազմում, այսինքն՝ դասախոսական կազմի 10-15%-ն են հիմնական աշխատողներ, մնացածը՝ հրավիրված կամ մրցույթով անցած մասնագետներ են: Այդ դասախոսներն աշխատում են պայմանագրով, ու ժամկետը լրանալուց հետո, եթե ծրագիրն ավարտված է, այլևս չեն աշխատում:

Հետազոտական համալսարաններում մագիստրոսական ծրագրերը շատ դինամիկ են. ասենք՝ որևէ ուղղվածության մագիստրոսական ծրագիրը երկու տարի գործում է, բայց հետո, եթե կոնկրետ այդ ծրագրով պատրաստվող մասնագետների պատվեր չկա, այն փակվում է, և կարող են բացվել այլ ծրագրեր: Այսինքն՝ հետազոտական համալսարաններում կրթական ծրագրերը շատ արագ փոփոխում են՝ կախված շուկայի պահանջներից: Հետազոտական համալսարաններում հետազոտականի բաղադրամասը կրթականի նկատմամբ մի քանի անգամ ավելի է, օրինակ, մագիստրոսական հետազոտական ծրագրերը ծավալով 4-5 անգամ գերազանցում են կրթականին: Այսինքն՝ կրեդիտների առյուծի բաժինը հետազոտական ծրագրերին է հատկացվում: Հետազոտական համալսարանները անպայման պետք է ունենան բիզնես-ինկուբատորներ կամ տեխնոպարկեր: Հետազոտական համալսարաններին

ինտեգրված են տարբեր տեսակի ֆիրմաներ, դրանք տեղում՝ համալսարանի ներսում, և արդյունաբերության այս կամ այն ճյուղի, կոնկրետ ոլորտում աշխատելու համար մասնագետի պատվեր են տալիս (այդ պատվերի համար, նույնիսկ, վճարում են):

\* \* \*

ԱՄՆ գիտնականների դոկտորական աստիճանաշնորհման 60%-ը վերապահվում է երկրի առաջին 50 հայտնի համալսարաններին:

\* \* \*

Միացյալ Նահանգներում գիտական աստիճանաշնորհումն իրականացվում է հետազոտական համալսարաններում: Այսինքն՝ գիտության դոկտորի աստիճան, պրաֆեսորի կոչում և այլն, շնորհում են այս համալսարանները: Մա մի կառույց է, որտեղ անմիջապես գիտություն-կրթություն կապն է ապահովվում և կարգավորվում է գիտություն-կրթություն-արտադրություն շղթան: Դինամիկ, մի շատ ճկուն համակարգ է, որտեղ բյուջեի զգալի մասը, արդեն նշեցի, ծախսվում է գիտություն-արտադրություն կապը խթանելու համար:

Այսօրվա մեր համալսարանները խորհրդային ժամանակներից ժառանգածներն են, որոնք կառուցվածքով, բովանդակությամբ արմատապես տարբերվում են հետազոտական համալսարաններից: Շատ երկրներում (նաև հետխորհրդային, որոնց թվում՝ Ռուսաստանում) հիմա հետազոտական համալսարանների ձևավորման կարգն ու չափորոշիչները հաստատում է կառավարությունը: Ռուսաստանը հետազոտական համալսարաններ ստեղծելու ինտենսիվ գործընթաց է սկսել և լուրջ աշխատանքներ է իրականացնում: Հետազոտական համալսարանների մագիստրոսական թեզերը հիմնականում հետազոտական օրիգինալ աշխատանքներ են, շատ հաճախ դրանք վերածվում են ինովացիոն ծրագրերի, այսինքն՝ ասպիրանտներին և մագիստրոսներին տրվում են կուրսային, դիպլոմային աշխատանքներ այնպիսի խնդիրներով, որտեղ առկա են ինովացիոն չափորոշիչներ: Օրինակ, Միացյալ Նահանգներում մագիստրոսական թեզերի մոտավորապես կեսը, հետագայում դառնալով գիտատար ապրանք, մտնում է արտադրություն: Այնտեղ թեզերը, դիպլոմային աշխատանքները, գիտական լուրջ հետազոտություններ են՝ անպայման ինովացիաներ պարունակող, ոչ թե ստանդարտ, շաբլոն թեմաների (ինչպես դա մեզ մոտ է արվում) ուսումնասիրություն: Վերջին 20 տարում Հայաստանում այս ոլորտի աշխատանքները հիմնականում աբզորային բնույթ ունեն, այսինքն՝ ուսումնասիրում են տվյալ ոլորտում ինչ հետազոտություններ են եղել, իսկ այնտեղ՝ կոնկրետ, օրիգինալ, նորարարական աշխատանքներ են:

Այսպիսով, հետազոտական համալսարանների հիմնական բնութագրիչները սրանք են:

Մ.Պ. - Պարոն Հարությունյան, հետազոտական համալսարանների ֆինանսավորումը պետական բյուջեից է. թե՞ դրանք անկախ, ինքնաֆինանսավորվող կառույցներ են:

Մ.Ն. - Հետազոտական համալսարանները բավականին ինքուրույն են. ծրագրերն իրենք են որոշում, թեև, բնականաբար, պետական միջամտություն կա, որովհետև կրթական ծրագրերում կան այնպիսի առարկաներ, որոնց մեջ քաղաքականություն կա, և պետական կառույցները պետք է տեղյակ լինեն, որ այդ ծրագրերը չեն հակասում երկրի քաղաքականությանը: Ինչ վերաբերում է տեխնիկական մասնագիտություններին, ծրագրերն իրենց ժամանակացույցով, հիմնականում որոշում է բուհը: Շատ կարևոր է անձնակազմի որակավորումը, դրան առանձնակի ուշադրություն են հատկացնում և կարևորում: Հիմնական կազմում աշխատող դասախոսների որակավորման բարձրացումը համալսարանի ուշադրության կենտրոնում է. նրանց պարբերաբար ուղարկում են այլ համալսարաններ փորձի փոխանակման:

Ռուսաստանում մի քանի ինստիտուտներ կան, որոնք հետազոտական համալսարանների որոշակի չափորոշիչներին համապատասխանում են: Դրանցից МИФИ-ն, ФИЗТЕХ-ը, МИСИС-ը հետազոտում լուրջ հետազոտական համալսարաններ դառնալու հավակնություններ ունեն: Թեև МГУ-ն էլ բավականին հզոր է և կարող է հետազոտականի հիմք լինել, բայց իր կանոնակարգային օրենքներով խիստ տարբերվում է հետազոտական համալսարանի մոդելից: Իսկ վերը նշված ինստիտուտներն իրենց կառույցով ավելի մոտ են հետազոտական համալսարաններին և հեշտությամբ կարող են ինտեգրվել այդ գաղափարին: Առաջին և հիմնական գործոնը, որ անհրաժեշտ է հետազոտական համալսարանին՝ տեխնոպարկն է. չկա մի այդպիսի համալսարան, որ տեխնոպարկ չունենա:

Արտասահմանում հետազոտական հիմնարկների տերերը շատ հաճախ լինում են նաև ամբիոնների վարիչներ, որովհետև, ասենք, մի դեկավար և՛ կրթական, և՛ գիտական խնդիրների համակարգողն է: Այսինքն՝ ամբիոններ կան, որ մի քանի ինստիտուտներ են ընդգրկում իրենց կազմում:

\* \* \*

Մասաչուսեթսի համալսարանը ներառում է բազային ավելի քան 300 արտադրական կազմակերպություն:

\* \* \*

Տեխնոպարկը շահագրգիռ մի շարք ֆիրմաների, հիմնարկների, օֆիսների կառույց է, որոնց մտահոգությունը նոր ինովացիաների ներդրումն է արտադրություն և շուկայում առաջինների թվում լինելու առողջ մրցակցությունը:

Դրանից ելնելով՝ իրենց ոլորտի համար կոնկրետ մասնագետի պատվեր են տալիս, որոնց գիտական «պատրաստումն» արդեն հետազոտական համալսարանների գործն է:

Տեխնոպարկի գործառույթների մեջ է նաև ինովացիոն աշխատանքների առևտրայնացման հարցը: Այսինքն՝ եթե դու ինովացիոն բնույթի գիտական արդյունք ունես, տեխնոպարկերի միջոցով հնարավոր է առևտրայնացնել: Ֆիրմաները, որոնք տեխնոպարկերում ունեն գրասենյակներ, ոչ միայն կարող են ինովացիոն բնույթի աշխատանքներն իրենց հիմնարկներում կամ արտադրությունում օգտագործել, այլև զբաղվում են տեխնոլոգիաների տրանսֆերով:

Տեխնոպարկի մոդել մենք արդեն ունենք Հայաստանում, բայց այն մեզ մոտ դեռ սաղմնային վիճակում է, դեռ զարգացման բավական երկար ճանապարհ ունի անցնելու:

Կառավարությունը որոշեց այդպիսի մի կառույց ստեղծել Գյումրիում (չգիտեմ՝ կհաջողվի, թե չէ), որը, կարծում եմ, այնքան էլ նպատակահարմար չէ: Բացատրեմ, թե ինչու. գաղափարն, անշուշտ, շատ լավն է, բայց թե ինչպիսի ընթացք կունենա՝ չեմ կարող ասել, որովհետև տեխնոպարկի համար ռացիոնալ, արդյունավետ պայմաններ, ճիշտն ասած, Գյումրիում չեմ տեսնում:

Այն պետք է ունենա կրթական շատ լուրջ ավանդույթներ, պետք է արդյունաբերական կենտրոններին մոտ գտնվի, որպեսզի ֆիրմաների ներկայացուցիչներին հարմար լինի, մոտ լինի ավտոմայրուղիներին և այլն: Այսինքն՝ կան մի շարք օբյեկտիվ գործոններ՝ տեխնոպարկերի ստեղծման համեմատաբար ռացիոնալ տեղ ընտրելու կամ դրանց հստակ աշխատելու համար, ինչը, սակայն, Գյումրիի տարբերակում չեմ տեսնում: Տեխնոպարկերը հիմնականում բնական, տեխնիկական գիտությունների ոլորտներում ընդգրկվող կառույցներ են, որովհետև արդյունաբերության համար այդ գիտություններն են խթանիչ: Թեև հումանիտար ոլորտներում էլ կարելի է տարբերակներ մտածել, ինչպես, ասենք, հայագիտության ասպարեզում: Գուցե հնարավոր լինի տեխնոպարկում ընդգրկել նաև հայագիտական արժեքների առևտրայնացումը: Մենք ունենք պատմամշակութային բավական հետաքրքիր ժառանգություն, որը կարելի է միջազգայնացնել: Չի բացառվում, որ

ապագայում հիմնվելով հայկական համայնքի կապերի վրա, ունենանք նաև նման կապերի գրասենյակ: Եթե այլ երկրների գիտնականները ցանկություն ունենան մեր մշակութային թեմաներով ավելի լուրջ զբաղվել, տեխնոպարկի համապատասխան գրասենյակների միջոցով կարելի է մեծ գումարներ վաստակել: Օրինակ, Մատենադարանի տնօրենին առաջարկել եմ, որ մեր ձեռագրերը, որոնք հայագիտական, պատմագիտական, մշակութային ծրագրերի, ուսումնասիրությունների հարուստ նյութ են, կարող են զգալի օգուտ տալ ինստիտուտին (գրքեր, հրատարակություններ և այլն):

Մ.Պ. - Պարոն Հարությունյան, որքանով է Հայաստանը պատրաստ ունենալու հետազոտական համալսարաններ, և որոնք են դրանց ստեղծման անհրաժեշտ ու բավարար պայմանները:

Մ.Հ. - Հետխորհրդային պետություններում հետազոտական համալսարաններ ստեղծելու մի քանի տարբերակ կա:

Տարբերակ առաջին

Այս տարբերակը որևէ բուհի բազայի վրա հետազոտական համալսարան ստեղծելն է, որը գործունեությամբ, տեխնիկական բազայով պետք է մոտ լինի հետազոտական համալսարանի պահանջներին: Օրինակ՝ ԵՊՀ-ն բնագիտական բավականին հզոր թև ունի, և, սկզբունքորեն, դրա բազայի հիման վրա, օգտագործելով ակադեմիական, ճյուղային, բազային ինստիտուտները, հնարավոր է ստեղծել հետազոտական համալսարան: Բայց հետազոտականի մյուս չափորոշիչները՝ դասախոսների միջազգային մրցույթներով ընտրությունը, տեխնոպարկի ստեղծում-կիրառումը, դասախոս-ուսանող հարաբերակցությունը և այլ շատ բաներ, որոնք կազմավորված ու ավանդույթներ ունեցող բուհերում չկան, կդժվարացնեն այս տարբերակով Հայաստանում հետազոտական համալսարան ստեղծելը: Հնարավոր է նաև, ասենք, ճարտարագիտական համալսարանի բազայի վրա ստեղծել, որն, իհարկե, ավելի դժվար տարբերակ է: Մեկ ինստիտուտի ներուժը բավարար չէ հետազոտական-գիտական կառույց ստեղծելու համար: Այս տարբերակի համար ֆինանսական ներդրումները ևս մեծ կլինեն: Բացի այդ, մարդկանց, որոնք տարիներով սովոր են նույն աշխատատեղին, դժվար է նոր պայմաններին ընտելացնել: Այդպիսիք չեն կարող հետազոտական համալսարանի պահանջները բավարարող աշխատանքային տեմպին ու նորմերին համընթաց շարժվել:

Հասկանալի է, որ գիտությունը խթանելու համար շատ մեծ գումարներ են անհրաժեշտ: Չեմ կարծում, որ ԵՊՀ-ն կամ ճարտարագիտական համալսարանը իրենց աշխատած գումարների, ասենք, 70 տոկոսը ծախսեն գիտության վրա: Այդ է պաճառը, որ, այս տարբերակը, թեև հնարավոր, բայց Հայաստանի համար ոչ իրատեսական եմ համարում:

Տարբերակ երկրորդ

Հետազոտական համալսարաններ ստեղծելու 2-րդ տարբերակը՝ զրոյից ստեղծելն է: Հայաստանում ունենք կադրային ուժեղ բազա, գիտությամբ լուրջ զբաղվող մասնագետներ (Հայաստանում, իմ տվյալներով, շուրջ 1200-1300 բարձր վարկանիշ ունեցող գիտնական կա, իսկ սա փոքր թիվ չէ մեր երկրի համար), գիտահետազոտական ինստիտուտներ: Պետք է կառուցվեն համալսարանական մասնաշենքեր, ստեղծվի տեխնոպարկ, ընտրվի մշտական աշխատակազմ և այլն, և այլն: Մա նույնպես հնարավոր, բայց դարձյալ Հայաստանի համար շատ ժամանակատար, դժվար ու թանկ տարբերակ է: Իմ մոտավոր հաշվարկներով՝ այս տարբերակը կյանքի կոչելու համար կպահանջվի ոչ պակաս, քան 10 տարի և կարժենա ոչ քիչ, քան մեկ միլիարդ դոլար, որպեսզի կարողանանք ստեղծել առաջնային անհրաժեշտության ենթակառուցվածքները (էլ չեմ խոսում աշխատանքների ընթացքում ծագող հազարավոր մանրումեծ խնդիրների ու ծախսերի մասին): Չեմ

կարծում, որ Հայաստանը պատրաստ է այս տարբերակով հետազոտական համալսարաններ ստեղծելուն: Համալսարանները, որոնք հետագայում հետազոտական դառնալու միտում ունեն, պետք է հաշվի առնեն, որ կան նաև ռիսկային ծրագրեր: Գիտության վրա ծախսվող գումարի ծավալից բացի, կլինեն թեմաներ, որոնց ապրանքայնացումը կարող է տապալվել, և համալսարանը պետք է պատրաստ լինի նաև ֆինանսական այս կարգի կորուստների: Այսինքն՝ ռիսկային կապիտալի կարիք կա:

Կա նաև հետազոտական համալսարան ստեղծելու երրորդ տարբերակը:

Դա հետևյալն է՝ եղած գիտահետազոտական ինստիտուտների հիման վրա. ասենք, ԳԱԱ-ն, որի կազմում կա ավելի քան 30 գործող ինստիտուտ: Դրանց մեծ մասը բարձր վարկանիշ ունի, միջազգային ասպարեզում հեղինակություն է, և կարող է դառնալ հետազոտական համալսարանի կորիզը (իհարկե, ներգրավելով ճյուղային մի շարք ինստիտուտներ, ինչպես, օրինակ, ֆիզիկայի, ամինաթթուների ինստիտուտները և այլն):

Իմ կարծիքով, ամենաեժան և Հայաստանի համար ամենանպատակահարմար տարբերակը սա է: Մանավանդ, այսօր Ազգային ակադեմիան ունի մագիստրոսական կրթության բաժին (ավելի քան 400 մագիստրոս), և այս փորձն արդյունավետ կլինի հետագայում նոր տիպի համալսարան ստեղծելու համար: Այս տարբերակը շատ նման է Իսրայելի հետազոտական համալսարանի ստեղծման տարբերակին. այնտեղ նույնպես 1992 թվականից հետո այս սկզբունքով գիտահետազոտական ինստիտուտները ինտենսիվորեն սկսեցին վերածվել հետազոտական համալսարանի: Եվ դրա կարգավիճակը ստացավ 1997-98 թթ: Սա մի հզորագույն հիմնարկ է, որը ներառեց ակտիվ գործող մի շարք ինստիտուտներ, և ստեղծվեց հետազոտական համալսարան:

Կարծում եմ՝ ակադեմիական և ճյուղային մի շարք ինստիտուտների հիման վրա կարելի է ստեղծել հետազոտական համալսարան նաև Հայաստանում: Դա բավական էժան կլինի նաև այն իմաստով, որ այս ինստիտուտները պետական բյուջեից գումարներ են ստանում և արդեն մագիստրոսական ու ասպիրանտական ուսուցման փորձ ունեն: Եթե պետական բյուջեին էլ գումարվի ուսանողների վարձավճարները, ապա ֆինանսական հիմքը կարելի է բավարար չափով ապահովված համարել:

Նման հաստատությունը պատկերացնում եմ Երևանում կամ մայրաքաղաքին մոտ տարածքում, ասենք՝ Աշտարակում: Այստեղ կենտրոնացված են մեծ թվով հետազոտական ինստիտուտներ. Բյուրականի աստղադիտարանը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները և այլն: Այսինքն, այս տարածաշրջանն ունի գիտական որոշակի ավանդույթներ, մոտ է մայրաքաղաքին Հայաստանի արդյունաբերական, հեռահաղորդակցության կենտրոններին, և, բացի այդ, բարձր վարկանիշ ունեցող մեր գիտնականների գերակշիռ մասն աշխատում է ակադեմիական համակարգում: Մարդկային ռեսուրսների առումով էլ այդպիսի լուծումը շատ նպատակահարմար է: Սա նաև լավ է այն առումով, որ Ակադեմիան մի շատ ճիշտ քայլ արեց. ստեղծեց Սփյուռքի բաժին, որտեղ ընդգրկված են արտասահմանի մեր գիտնական հայրենակիցները: Եվ նրանց ներուժը շատ հաջողությամբ կարող ենք կիրառել հետազոտական համալսարանի աշխատանքներում: Ավանդույթների տեսակետից, ակադեմիական գիտնականները, գիտությամբ զբաղվող, գործող մարդիկ են, նրանց գիտական ակտիվությունն ավելի մեծ է, քան բուհական դասախոսներինը (բուհերում դասախոսներ կան, որ վերջին 10-15 տարում, գուցե ավելի, գիտական ոչ մի հոդված, էլ չեն ասում լուրջ հետազոտություն չեն արել), իսկ ակադեմիական գիտնականը զբաղված է ակտիվ գիտությամբ:

Այս չափորոշիչը, որ շատ կարևոր է հետազոտական համալսարանների համար (դասախոսը պետք է լինի ակտիվ աշխատող գիտնական), Հայաստանում

ակադեմիական բազայի վրա համալսարան ստեղծելու դեպքում՝ բավարար պայմաններից է:

Ակադեմիական գիտնականների մոտ քարացած ավանդույթներ չկան: Այս մարդիկ հեշտությամբ կաշխատեն նոր պայմանների ու պահանջների դեպքում՝ առանց որևէ սովորույթից հետ վարժվելու խնդրի, չի լինի հին կարծրատիպեր ջարդելու նախապայմանը: Հաշվի առնելով մեր Սփյուռքի գոյությունը (խոսքը սփյուռքահայ գիտնականների մասին է)՝ հեշտ կլուծվի միջազգային ընտրական մրցույթների խնդիրը, եթե հետազոտական համալսարանը ստեղծվի, ասենք, Գիտությունների ակադեմիայի բազայի վրա:

Մի խոսքով, իմ կարծիքով, Հայաստանի համար հետազոտական համալսարան ստեղծելու լավագույն տարբերակը սա է:

Իսկ որ մեր երկրում հետազոտական համալսարանի ստեղծումն ուղղակի ռազմավարական նշանակության անհրաժեշտ նախաձեռնություն է՝ ավելի քան համոզված եմ:

Գիտություն-կրթություն, գիտություն-արտադրություն կապն ապահովելու համար առայժմ հայտնի լավագույն լուծումը հետազոտական համալսարաններն են:

Այսպիսի համալսարանի ստեղծումը Հայաստանում կնպաստի գիտություն-կրթություն կապում ֆինանսատնտեսական շատ հարցերի կարգավորմանն ու լուծմանը:

Ես, իհարկե, տնտեսագետ չեմ, բայց իմ մոտավոր հաշվարկներով, այսպիսի կառույցի ստեղծումը պետությանը կարժենա 200 միլիոն, գուցե մի քիչ պակաս: Կարծում եմ, ցանկության դեպքում, դա կարելի է իրականացնել 5-6 տարում: Սա ամենառացիոնալ՝ արագ (մասնագետների շուտ տրանսֆորմացում), քիչ ռեսուրսներ և ոչ շատ ֆինանսներ պահանջող տարբերակն է: Եթե ապագայում հաջողվի ստեղծել այս համալսարանը, այն հիմնականում իրականացնելու է մագիստրոսական և ասպիրանտական ուսուցում (բակալավրական ուսուցում իրականացնող բուհեր մենք բավականին ունենք):

Այս համալսարանի մեկ այլ կարևոր առաքելությունը լինելու է ոչ միայն տեղական տնտեսության առաջընթացն ապահովելը (բարձրակարգ, հմուտ, ժամանակակից ինովացիոն համակարգին տիրապետող մասնագետների ստեղծմամբ), այլև պետք է տարածաշրջանային նշանակության գիտական հարցեր լուծի: Հայաստանը մեր և մերձակա տարածաշրջաններում (Սիրիա, Լիբանան, արաբական երկրներ և այլն) գիտական վարկանիշով դեռևս գայթակղիչ է, իսկ որոշ ոլորտներում՝ միջազգային հեղինակություն ենք: Այս տեսանկյունից կարող ենք շահեկան վիճակում հայտնվել (որն էլ իմ նշած ռազմավարությունն է), իսկ եթե այս նախաձեռնումը դանդաղեցնենք, դա կարող են անել մեր հարևան երկրները (Վրաստան, Ադրբեջան): Թուրքիայում կա Ստամբուլի Սաբանչի հետազոտական համալսարանը: Այն բավական լավ պայմաններ ունի, մեծ գումարներ են ծախսում, բայց այն ուղղությամբ չի աշխատում, որ ի վիճակի ենք անելու Հայաստանում (կադրային տեսակետից թուրքերը զգալիորեն խեղճ են):

Հայաստանում ուղղակի անհրաժեշտ է բարձր մակարդակի հետազոտական գոնե մեկ համալսարան ունենալ:

Եթե դա չարեցինք մոտակա 5-6 տարում, լուրջ վնաս ենք կրելու, որովհետև մեր որակյալ կադրային ռեսուրսները սպառվում են...